Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 830 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել Հայաստանի Հանրապետության մարզերի, Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայ օգնության ֆոնդ (630 երկրորդ պողոտա, Նյու-Յորք, ԱՄՆ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մ. Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության մարզեր և Ջավախք<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 112,200,000 դրամ |
| 7. | Բարեգործությունն ստացողը | Հայաստանի Հանրապետության մարզերի, Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Ջավախքի 980 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների, միասնական սոցիալական ծառայության և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա:<br>2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել՝<br>1) նախատեսվում է տարին երկու անգամ դրամական օգնության տրամադրում՝ 104,900,000 դրամի չափով.<br>2) Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում.<br>3) կազմակերպական ծախսեր՝ 7,300,000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) կապի և հաղորդակցության ծառայություններ 1,000,000 դրամ<br>2) ավտոմեքենայի վառելիք 2,600,000 դրամ<br>3) կոմունալ ծառայություններ 700,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 7,300,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 6. 5 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝<br>1) ծրագրի ղեկավարի աշխատավարձ 3,000,000 դրամ<br>2) կապի և հաղորդակցության ծառայություններ 1,000,000 դրամ<br>3) ավտոմեքենայի վառելիք 2,600,000 դրամ<br>4) կոմունալ ծառայություններ 700,000 դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության.<br>2) Տեղական ինքնակառավարման մարմինների. |

| | | |
|---|---|---|
| | | 3) Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Գեղարքունյաց, Արագածոտնի, Արցախի և Վիրահայոց թեմերի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ